ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Արմինե Սեյրանյան, ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության պետական բյուջեի հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ.

2. Գործուղման վայրը և ժամկետները.

ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն), 2024 թվականի հունիսի 17-ից մինչև հունիսի 21-ը:

3. Հրավիրող կողմը.

Արժույթի միջազգային հիմնադրամ.

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«Հանրային ֆինանսների փոխակերպում GovTech-ի միջոցով» («Transforming Public Finance through GovTech (GT)») թեմայով դասընթացի նպատակն էր գնահատել երկրի և կառավարության թվային զարգացումը, թվային ենթակառուցվածքների ծախսերը, պետական ֆինանսների բնագավառում ծրագրերի թվայնացումից ակնկալվող օգուտները, գնահատել թե որքանով է նպաստում թվայնացման իրականացումը եկամուտների հավաքագրմանը, պետական ծախսերի արդյունավետությանն ու թափանցիկության բարելավմանը, ինչպես նաև ծանոթանալ թվայնացման ռազմավարությունների իրականացման հիմնական սկզբունքներին:

5. Քննարկված թեմաները.

Դասընթացի ընթացքում, մասնավորապես, քննարկվել են հետևյալ թեմաները.

1) Թվայնացման միտումները և թվային բաժանումը

- GovTech-ի միջոցով հանրային ֆինանսների փոխակերպում
- COVID-19 ընթացքում ինտերնետի յուրացման միտումները

2) Լայնաշերտ ենթակառուցվածքի ներդրման կարիքների գնահատում
3) Առողջապահական համակարգի թվայնացում և թվայնացման միջոցով սոցիալական ապահովության ցանցի ընդլայնում և կատարելագործում
4) Բյուջետավորման գործընթացի թվայնացում (Ավստրիայի օրինակով)
5) Եկամուտների կառավարում, թվային փոխակերպում և եկամուտների կառավարման թվային բիզնես մոդել
6) Եկամուտների արդյունավետ կառավարման նպատակով տվյալների բազայի ստեղծում
7) Հանրային ֆինանսների կառավարման թվայնացում՝ հնարավորություններն ու միտումները

- GovTech-ի միջոցով հանրային ֆինանսների փոխակերպում
- Ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգի նախագծում

8) Հանրային ֆինանսների կառավարման համար թվային լուծումների գնահատում, նախագծում և կատարելագործում
9) Թվայնացման գործընթացում ռիսկերի կառավարում (կիբեռվտանգներ և բիզնեսի կայունության ռիսկեր)

- Պետական կանխիկ միջոցների և պարտքի կառավարման նպատակով բիզնես գործընթացների անընդհատության պլանավորում

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Մեկշաբաթյա դասընթացի ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել Ավստրիայի ֆինանսների նախարարության, Ավստրիայի տեղեկատվական գործակալության, Արժույթի միջազգային հիմնադրամի, Վիեննայի միացյալ ինստիտուտի մասնագետների հետ: Դասընթացի ժամանակ հանդիպումները և ելույթներն իրականացվել են գործնական աշխատանքների, քննարկումների, բանավեճերի տեսքով, որոնց ընթացքում քննարկվել և պարզաբանվել են թվայնացման բարեփոխումների ընթացքում առաջացող խնդիրները, դրանց լուծման ուղիներն ու հաջող իրականացման գործոնները:

Գործնական աշխատանքի ընթացքում մասնակիցների կողմից ներկայացվել են իրենց երկրներում իրականացվող թվայնացման գործընթացները:

Դասընթացը արդյունավետ էր: Հետաքրքիր էր ծանոթանալ այլ երկրներում տեղի

ունեցող թվայնացման գործընթացներին: Դասընթացն հնարավորություն տվեց ձեռք բերել նոր գիտելիքներ և զարգացնել կարողություններ, որոնք կկիրառվեն աշխատանքային գործունեության ընթացքում:

Բոլոր դասախոսությունները իրականացվել են շնորհանդեսների միջոցով՝ մասնակիցների ներգրավմամբ: Կազմակերպվել են գործնական խմբակային աշխատանքներ առաջադրվող թեմաների շուրջ և կատարված աշխատանքների հիման վրա պատրաստվել ու ներկայացվել են շնորհանդեսներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ծանոթանալով տարբեր երկրներում GovTech-ի միջոցով հանրային ֆինանսների փոխակերպման բնագավառում իրականացվող բարեփոխումներին՝ առաջարկում եմ քննարկել դրանց լավագույն միջազգային փորձերը՝ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող բարեփոխումների շրջանակներում կիրառելու նպատակով:

Ստորագրությունը, ամսաթիվը:

26.06.2024թ.